

«ՎԱՆՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հաստատում եմ

Բուհի ռեկտոր

\_\_\_\_\_ Գ.Կ.Խաչատրյան

“\_05\_”\_05\_ 2014թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՎԱՆՁՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ 3

“\_30\_” \_\_\_\_\_04\_\_\_\_\_ 2014թ.

## I. Ընդհանուր դրույթներ

1. «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Բուհ) ուսանողական գիտական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Բուհի ուսանողներին միավորող՝ բուհական ներկայացուցչական ինքնակառավարվող ուսանողական միավորում է, որի նպատակն է նպաստել ուսանողների գիտական, հետազոտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

2. Ընկերությունը որպես հասարակական միավորում չունի իրավաբանական անձի կարգավիճակ և իր գործունեությամբ ղեկավարվում է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին», «Իրավական ակտերի մասին», ՀՀ օրենքներով, Բուհի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով:

3. Ընկերության կանոնադրությունը և նրանում կատարվող փոփոխություններն ու լրացումները ընդունվում են Ընկերության ընդհանուր ժողովի կողմից, և Ընկերության նախագահության ներկայացմամբ հաստատվում են Բուհ-ի գիտական խորհրդի որոշմամբ:

4. Ընկերության հարաբերությունները Բուհի մարմինների հետ կառուցվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան, Բուհի շրջանակներում գործող ներկազմակերպական կանոններով, Բուհի գիտական խորհրդի և ռեկտորատի, ընկերության կանոնադրական նպատակների իրագործմանն ուղղված որոշումներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

5. Ընկերության անվանումն է.

- ռուսերեն՝ Студенческое Научное Общество (CHO)

- անգլերեն՝ Students Scientific Society (SSS)

6. Ընկերությունն ունի ձևաթուղթ, դրոշմակնիք, էլեկտրոնային կայք, անհատականացման միջոցներ:

7. Ընկերության իրավաբանական հասցեն է՝ 2021, Հայաստանի Հանրապետություն, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պող. 36:

## II. Ընկերության նպատակներն ու խնդիրները

8. Ընկերության հիմնական նպատակն է աջակցել, նպաստել, կազմակերպել ու համակարգել Բուհի ուսանողների կրթական, գիտական, հետազոտական, ստեղծագործական գործունեությունը:

9. Ընկերության խնդիրներն ու գործունեության ուղղություններն են.

1) կրթական, գիտա-հետազոտական ոլորտներում ուսանողության նախաձեռնությունների սատարում, կազմակերպում և իրականացում,

- 2) ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների, քննարկումների, բանավեճերի, ցուցահանդեսների, ինտելեկտուալ խաղ-մրցույթների և այլ կրթական ու գիտական ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպում,
- 3) միջբուհական կրթական և գիտական կապերի հաստատում, համագործակցություն,
- 4) բուհական երիտասարդական գիտական ծրագրերի և ներուժի նպատակային ուղղվածության մասին տեղեկատվության համակարգում,
- 5) ուսանողներին ներգրավում կրթական, գիտական խմբերում և ծրագրերում,
- 6) ուսանողների գիտական, հետազոտական աշխատանքների հրատարակում,
- 7) այլ կրթական, գիտական կենտրոնների, բուհերի գիտական ընկերությունների հետ համագործակցություն:

### III. Ընկերության կառավարումը

10. Ընկերության կառավարման մարմիններն են՝ Ընդհանուր ժողովը, նախագահությունը, նախագահը:
11. Ընկերության բարձագույն մարմինը՝ Ընդհանուր ժողովն է, որի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարեկան մեկ անգամ:
12. Ընկերության Ընդհանուր ժողովը կազմավորվում է Ընկերության բոլոր անդամներից կամ՝ Ընկերության յուրաքանչյուր ենթակառուցվածք ընտրվում է երկու ներկայացուցիչ, որպես պատվիրակ:
13. Ընկերության Ընդհանուր ժողովը՝
  - 1) մշակում է Ընկերության կանոնադրությունը և աշխատակարգը,
  - 2) հաստատում է Ընկերության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը,
  - 3) քննարկում և որոշում է Ընկերության գործունեության կարևորագույն ուղղությունները,
  - 4) առաջարկություններ է ներկայացնում Բուհի գիտական խորհրդին,
  - 5) ստեղծում է Ընկերության աշխատանքային օղակները, ինչպես նաև հաստատում է նրանց կազմն ու աշխատակարգը,
  - 6) քննարկում և ի գիտություն է ընդունում Ընկերության նախագահի տարեկան հաշվետվությունները,
  - 7) կանոնակարգում է Ընկերության անդամակցությանը վերաբերող հարցերը,

8) իրավասու է լուծել Ընկերության գործունեության հետ կապված ցանկացած հարց:

14. Ընկերության Ընդհանուր ժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին մասնակցում են Ընկերության Ընդհանուր ժողովի պատվիրակների ընդհանուր թվի ավելի քան երկու երրորդը:

15. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են անդամների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ:

16. Ընդհանուր ժողովի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Ընկերության Նախագահի կամ նախագահության կողմից կամ Ընդհանուր ժողովի անդամների մեկ երրորդի պահանջով:

17. Ընկերության նախագահն ընտրվում է Ընդհանուր ժողովի կողմից, քվեարկության մասնակիցների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ՝ երկու տարի ժամկետով: Ընկերության նախագահն իր պարտականությունների կատարմանն անցնում է Բուհի գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտորի կողմից հաստատվելուց հետո:

18. Ընկերության նախագահը.

1) իրականացնում է Ընկերության ընթացիկ և ամենօրյա ղեկավարումը,

2) ներկայացնում է Ընկերությունը Բուհի մարմիններում, այլ կազմակերպություններում,

3) համակարգում է Ընկերության կառուցվածքային միավորների աշխատանքները:

19. Ընկերության նախագահի տեղակալը նշանակվում է Ընկերության նախագահության կողմից՝ նախագահի ընտրության ժամանակահատվածով, որը համակարգում է Ընկերության քարտուղարության աշխատանքները և Ընկերության աշխատանքային օղակների գործունեությունը: Ընկերության նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում, վերջինիս լիազորությամբ կատարում է նախագահի լիազորությունները:

20. Ընկերության քարտուղարը համակարգում է Ընկերության քարտուղարության աշխատանքները և կատարում է Ընկերության նախագահի կողմից առանձին հանձնարարականներ:

21. Ընկերության նախագահությունն Ընկերության կոլեգիալ կառավարման մարմին է և իրականացնում է Ընկերության ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում Ընկերության ընթացիկ աշխատանքները:

22. Ընկերության նախագահությունն ի պաշտոնե ղեկավարում է Ընկերության նախագահը:

23. Ընկերության նախագահության անդամներն են ի պաշտոնե՝ Ընկերության նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը, Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերությունների նախագահները, աշխատանքային խմբերի

/հանձնաժողովների/ նախագահները, ինչպես նաև Ընկերության ընդհանուր ժողովի կողմից որոշված այլ անձինք:

24. Ընկերության գործունեության վերահսկողությունն իրականացնում է Բուհի գիտական գծով պրոռեկտորը:

#### **IV. Ընկերության կառուցվածքը**

25. Ընկերության կառուցվածքային միավորներն են՝ ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերությունները, որոնք ձևավորվում են ֆակուլտետների ուսանողներից և դասախոսներից:

26. Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերություններն իրականացնում են տվյալ ֆակուլտետում Ընկերության կանոնադրական նպատակների ու խնդիրների իրականացումը:

27. Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերության խորհուրդը ձևավորվում է համապատասխան ամբիոնների երաշխավորությամբ ներկայացված առնվազն երկու ուսանողից և դասախոսից:

28. Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերության նախագահը ընտրվում է Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերության խորհրդի կողմից՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

29. Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերության նախագահը կազմակերպում և ներկայացնում է Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերության աշխատանքները, հետևում է տվյալ ֆակուլտետում Ընկերության ընդհանուր ժողովի որոշումների կատարմանը:

30. Ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերության նիստերը գումարվում են առնվազն երեք ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրվում են խորհրդի նախագահի կողմից կամ անդամների մեկ երրորդի պահանջով: Նիստերը իրավագոր են, եթե դրանց մասնակցում են անդամների ընդհանուր թվի երկու երրորդը:

31. Ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը կարող է ստեղծել սույն կանոնադրության նպատակներին չհակասող մասնագիտական խմբեր, ակումբներ և այլ միավորներ, որոնց կարող են անդամակցել նաև Ընկերության անդամ չհանդիսացող այլ ուսանողներ:

#### **V. Ընկերության միջոցները և դրանց օգտագործման կարգը**

32. Ընկերության միջոցները գոյանում են Բուհի ֆինանսական կամ այլ գույքային հասկացումներից, այլ կազմակերպությունների, հիմնադրամների նվիրատվություններից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

33. Ընկերությունը՝ սահմանված կարգի համաձայն, անվճար օգտվում է Բուհի տարածքային, տեխնիկական և այլ միջոցներից:

34. Ընկերության միջոցները օգտագործվում են բացառապես Ընկերության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

#### **VI. Ընկերության գործունեության դադարեցման կարգը**

35. Ընկերությունն իր գործունեությունը դադարեցնում է Բուհի գիտական խորհրդի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

36. Ընկերության լուծարումից հետո նրա ամբողջ գույքը և միջոցները փոխանցվում են Բուհին: